ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

4 օգոստոսի 2005 թվականի N 1597-Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ (ՌԵԳԻՍՏՐԸ) ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) էլեկտրոնային թվային ստորագրության հավատարմագրված հավաստագրման կենտրոնների մատյանը (ռեգիստրը) վարելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) ***(1-ին կետի բ ենթակետն ուժը կորցրել է 08.10.08 թիվ 1157-Ն որոշում)***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2005 թվականի օգոստոսի 4-ի
N 1597-Ն որոշման

ԿԱՐԳ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆԸ (ՌԵԳԻՍՏՐԸ) ՎԱՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է էլեկտրոնային թվային ստորագրության հավատարմագրված կենտրոնների (այսուհետ՝ հավաստագրման կենտրոն) մատյանը (ռեգիստրը) վարելու կարգը:

2. Մատյանը (ռեգիստրը) պարտադիր վարվում է բոլոր հավատարմագրված հավաստագրման կենտրոնների համար:

3. Մատյանը (ռեգիստրը) վարում է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրումն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

II. ՄԱՏՅԱՆԻ (ՌԵԳԻՍՏՐԻ) ՎԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

4. Մատյանը (ռեգիստրը) հավատարմագրված հավաստագրման կենտրոնների հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանն է:

5. Մատյանում (ռեգիստրում) գրանցվում են հետևյալ տեղեկությունները՝

1) հավատարմագրված հավաստագրման կենտրոնի անվանումը, գործունեության իրականացման և (կամ) իրավաբանական անձի գտնվելու վայրերը.

2) սերտիֆիկացնող մարմնի անվանումը, հասցեն.

3) սերտիֆիկատի համարը, այն տալու ամսաթիվը և, առկայության դեպքում, գործողության ժամկետը.

4) հավատարմագրման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հավատարմագրումից զրկելու ամսաթիվը:

6. Լիազոր մարմինը, իր հայեցողությամբ, գրանցամատյանում կարող է զետեղել նաև այլ տեղեկություններ:

7. Մատյանում (ռեգիստրում) գրանցված տեղեկություններն անհրաժեշտության դեպքում կարող են փոփոխվել և (կամ) թարմացվել, որի մասին այդ տեղեկությունների սկզբնական գրանցման տողում կատարվում է համապատասխան նշում:

8. Լիազոր մարմինն ապահովում է մատյանի (ռեգիստրի) պաշտպանվածությունը և հրապարակայնությունը՝ առնվազն իր պաշտոնական կայքի միջոցով:

(1-ին հավելվածը խմբ. 08.10.08 թիվ 1157-Ն որոշում)

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2005 թվականի օգոստոսի 4-ի
N 1597-Ն որոշման

Ձև

ՄԱՏՅԱՆ (ՌԵԳԻՍՏՐ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

(2-րդ հավելվածն ուժը կորցրել է 08.10.08 թիվ 1157-Ն որոշում)

ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

«11» հոկտեմբերի 2005 թ.